ՀՀ արդարադատության նախարար

պարոն Հ.Մանուկյանին

(06.11.2014թ. Ե-2284)

Հարգելի պարոն Նախարար,

Մեր կազմակերպությունը ծանոթանալով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ Նախագիծ) հետ, եկավ այն եզրակացության, որ այդ Նախագիծն իր կառուցվածքով և բովանդակությամբ ոչ մի քննադատության չի դիմանում: Ներկայացված Նախագծում գրեթե չկա որևէ գլուխ, հոդված, կետ, որն անհամաձայնություն և առարկություններ չառաջացնի մեզ մոտ:

Ոչ մի տրամաբանություն չգտնելով այդ Նախագծում, մենք ստիպված եղանք փնտրել սույն Նախագծի իրական «սկզբնաղբյուրին»: Պարզվեց, որ այդ Նախագծի «սկզբնաղբյուրը» հայերեն վատ թարգմանված և անփութորեն խմբագրված «Անհատական տվյալների մասին» ՌԴ թիվ 152-ФЗ դաշնային օրենքն է 27.07.2006թ. (փոփոխված թիվ 261 ФЗ, 23.07.2011, (ФЗ Н 152-ФЗ “О персональных данных”)):

Այսպիսով, մենք նպատակահարմար չենք համարում ՀՀ Արդարադատության նախարարությանը ներկայացնել սույն Նախագծի վերաբերյալ մեր դիտողություններն ու առաջարկությունները հոդված առ հոդված, քանի որ այն թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով խորը լրամշակման կարիք ունի:

Այդ կապակցությամբ, մենք առաջարկում ենք Ձեզ շրջանառությունից հանել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը չի համապատասխանում անհատական և անձնական տեղեկատվության առաջացման, հավաքման, թարմացման, վերամշակման, պահպանման, ոչնչացման, տրամադրման և միասնական գործընթացի պահանջների ոգուն և բովանդակությանը:

Հարգանքով՝ Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն